

#### 5.4. 2009թ. ապրիլ ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, ապրիլին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից ցածր 2-3 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմային մոտ, երկրորդ տասնօրյակում՝ նորմայից ցածր 3-5, երրորդ տասնօրյակում՝ 2-4 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում կազմել է +17 +18°C, Սյունիքի հովիտներում և ՀՀ Տավուշի մարզում՝ +13 +16°C, ՀՀ Լոռու մարզում՝ +10 +13°C, Սյունիքի նախալեռներում և լեռնային շրջաններում՝ +5 +10°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է ապրիլի 30-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +25 +27°C, ՀՀ Տավուշի մարզում և Արարատյան դաշտավայրում՝ +21 +24°C, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ +18 +22°C, լեռնային շրջաններում՝ +11 +16°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է -1 -4°C, ՀՀ Լոռու մարզում՝ -3 +1°C, Սյունիքի նախալեռներում՝ -1 +1°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +1 +4°C, Արարատյան դաշտավայրում՝ +5 +7°C, Սյունիքի հովիտներում՝ +3 +7°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է ապրիլի 10-14-ին: Լեռնային շրջաններում գրանցվել է -7 -12°C (ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -14°C, Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ -16°C), Սյունիքի նախալեռներում՝ -6 -10°C, ՀՀ Լոռու մարզում՝ -3 -8°C (ք.Տաշիրում՝ -12°C), ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում՝ -3 +2°C, Արարատյան դաշտավայրում՝ -1 +2°C:

Ապրիլ ամսվա ընթացքում հանրապետության տարածաշրջանների մեծ մասում տեղումների քանակը եղել է նորմայից բարձր և նորմայի սահմաններում: Արարատյան դաշտավայրում այն կազմել է նորմայի 140-172%-ը (ք.Արարատում (ՀՀ Արարատի մարզ)՝ 90%), լեռնային շրջաններում, ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերում՝ 95-142%, ՀՀ Լոռու մարզում՝ 85-95%, ՀՀ Շիրակի մարզում՝ 60-85%:

Ապրիլի 3-ին, 9-ին, 13-ին, 15-19-ին, 23-26-ին և 29-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ և ամպրոպ: Ապրիլի 12-13-ին և 23-26-ին տարածաշրջանների մեծ մասում տեղումները դիտվել են ձյան տեսքով:

Ապրիլի 9-ին և 11-12-ին ք.Երևանում, 9-ին՝ ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ), ք.Արարատում, ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ), 9-ին, 16-ին և 20-ին՝ ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ), 9-ին՝ Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), 11-ին՝ ք.Եղվարդում (ՀՀ Կոտայքի մարզ) դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 9-16 մ/վրկ, պոռթկումները՝ 15-22 մ/վրկ: Ապրիլի 11-ին ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ), 15-ին՝ Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), 23-ին և 25-ին՝ ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ) դիտվել է մառախուղ 40-500 մ տեսանելիությամբ: Ապրիլի 23-ին ք.Տաշիրում, ք.Իջևանում, ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ), ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ), ք.Հրազդանում, Ֆանտան

## 5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ), Ծաղկահովիտ գյուղում (ՀՀ Արագածոտնի մարզ) դիտվել է ուժեղ ձյուն: Ապրիլի 29-ին ք.Տաշիրում դիտվել է կարկուտ 6 մմ տրամագծով:

Ձյան ծածկույթը պահպանվել է 2500 մ և ավելի բարձրություններում և ապրիլի 30-ի դրությամբ Արագած բարձր լեռնային կայանում կազմել 371 սմ, Որոտանի լեռնանցքում՝ 102 սմ:

Ապրիլին հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 40-60%-ը:

Սևանա լճի մակարդակն ապրիլ ամսվա ընթացքում բարձրացել է 9 սմ-ով և 2009թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել 1899.04 մ, որը 2008թ. նույն օրվա համեմատ ցածր է 4 սմ-ով: